

## ՅԱՐԳԱՆՔԻ ԽՈՍՔԵՐ՝ Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐքԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Թորգոմ Պատրիարքի մահը կարելի է առել ցնցեց արտասահմանի Հայութիւնը, ոչ միայն այն դիրքի համար որ զբաւածէր, այլ մանաւանդ այն դէմքին համար, որ գնալով գառնում է մեծագուցիկ: Պատրիարքական գահին վրայ նա ներկայացնում էր ոչ այնքան Երուսաղէմի վանքը, որքան Հայոց ազգային Եկեղեցին և հայ Եկեղեցականը: Հաւատարիմ իր համազումին թէ Հայոց ու իր Եկեղեցին մի են և անբաժան նա պաշտպանում էր Հայոց պատմական Եկեղեցին, հայոց ազգը պաշտպանելու գիտակցութեամբ և ծառայում էր հայութեան՝ Եկեղեցուն ծառայելու ներքին համոզումով: Տիպար հայ-քրիստոնեան էր իր սփեմին տակ և գնում էր իր անունը խառնելու այն երախտաւոր Եկեղեցականների շարքին, որ անցեալ գարերի մէջ պաշտպանեցին Հայոց Եկեղեցին ու ժաղավուրդը անձնուիրաբար և անդուլ: Նրանք, որ մտերիմ ու մերձ էին իր անձին ու գործին, անշուշտ չեն գանդաղիր վեր հանել նրա դերը Երուսաղէմի քարեկարգութեան գործի մէջ ինչպէս և բնութագրել մարդն ու քրիստոնեան նրա անձի մէջ: Յուսով եմ նաև, որ Դուրեան մատենագրարանի շարքի մէջ Երուսաղէմը լոյս կ'ընծայէ հանգուցեալ Պատրիարքի գրութիւնները, որ լոյս տեսած են Սիոնի մէջ: Ինձ համար իր գործի մէջ ամենից գնահատելի կողմն եղած է իր հոգածութիւնը հայոց լիզուի մտօին և հայ բանասիրութեան: Ինքն ունէր խնամուած հայերէն և նոյն խնամքով կը խմբագրէր Սիոնի յօդուածները: Իր օրով Սիոնը դարձու շատ արքէքաւոր պարբերական: Վանքին ձեռագիրների ցուցակագրութեան աշխատանքը, որ իր օրով սկսու և Դուր-

խորէն, որ ան յիշուի, այսուհետեւ, ի շարս մեր երանելի հայրապետաներուն:

Ուռրըն, Մեսրոպի աշակերտներէն մէկուն հոգին էր որ անոր մէջ այցելութեան եկեր էր մեղի:

Տիգրան ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

եան մրցանակի արդիւնքները, որ իր ժամանակ երևան եկան, Դուրեան մատենագրարանը, որ մեծ ապագայ ունի եթէ նոյն խնամքին արժանանայ, որ կը վայրէլ էր իր կողմէն և անվիճելի ապացոյց են իր բանասիրական հոգածութեան:

Ցաւալի էր Թորգոմ Պատրիարքի մահը և ապաժաման: բայց ամէնք մահկանացու ենք: Կրկնակի ցաւալի կը լինի մեր կորուստը, եթէ այն սպին, որով աշխատեցին ու գործեցին վարպետն ու աշակերտը — Դուրեան և Գուշակեան — իր շարունակողը չունենայ նրանց մահից յետոյ: Երուսաղէմը միակ ազգային կեղրոնն է, որ իր սիրթական միջացներով կարող է բարոյական մեծ դրամագլուխ ամբարել և գունալ մեծ զօրավիր հայ ազգայնութեան արտասահմանի մէջ: Դուրեան սկսեց, Գուշակեան շարունակեց պատուով և աճեցուց, պէտք է, որ յաջորդը աւելի մեծ արդիւնքի հասնել կարենայ:

Նախորդների աշխատանքը նախորաշած է ուղին, պէտք է աւելի հեռուն գնալ միշտ նոյն ուղղութեամբ, որ ազգին հաւանութեան արժանացած է, ինչպէս ցայց տուաւ Դուրեանի յորելեանը և Գուշակեանի մահը: Հասցնել նոր, անձնուել, գիտապէս պատրաստուած ուժեր: Հասնիլ սիրթագիր հոգեսոր կարիքներին: ամուր հիմքերի վրայ դնել հայոց բանասիրութեան մշակումն ու զարգացումը — ահա երեք մեծ գործեր, որ սպասում են նոր Պատրիարքից իրենց շարունակութիւնը: Յայունի և թէ ինչ անուն ունեցած է երուսաղէմն ու իր պարտքը վերջին գար ընթացքին: այդ ցաւալի համբաւը մոռըցնել տուին Դուրեան և Գուշակեան: անշուշտ նպաստեցին և պարտգաները, Թուրքական իշխանութեան վերացումը: Պարագաները նոյն են, պէտք է այնպէս տնել, որ Երուսաղէմի քարի համբաւը գնալով աւելի տարածուի և Ա. Յակոբեանց վանքը դառնայ պահակը հայոց ազգայնութեան և մշակոյթի:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ